

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

**ՑՈՒՆԱՄԵԱՑ ԶՈՒԵԼԵԱՆ  
ԱՄԵՐԻԿԱՏԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ**



Այս տարի երացաւ յիսուս տարուան շրջանը այն օրէն՝ երբ առաջին անգամ  
Ամերիկայի մէջ Հայոց Եկեղեցին Հաստատուեցաւ իբրեւ Առաջնորդական Թեմ,  
Հայոց Հայրիկ Տ. Մկրտիչ Կաթողիկոսի Կոնդակովս

Ազգային Կեդր. Հարչութեան մէջ որոշուած է որ այս յիսուսեայ տարե-  
դարձը պատշաճ շուրջով եւ Հանդիսութեամբ տօնուի մեր բովանդակ Թեմին մէջ,  
իւրաքանչիւր Համայնքի կողմէ:

Հանդիսաւորութեանց գլխաւոր նպատակը պիտի ըլլայ՝ Առաջնորդարանի յիսուս  
տարուան կեանքն ու յառաջդիմութիւնը պատկերացնել ժողովուրդին առջեւ եւ  
Հայութեան Հաւատքը զօրացնել Ամերիկայի մէջ իր մնայուն զոյութեան եւ սպա-  
գային մասին, շնչանկով գործ ու կարեւորութիւնը Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր  
զօրծին, միաժամանակ վեր Հաննկով յիսուս տարիներու ընթացքին եկեղեցւոյ մէջ  
զօրծող անձանց եւ կազմակերպութեանց արժանիքները:

Հանդիսութեանց երկրորդական նպատակը պիտի ըլլայ՝ Հիմնադրամ մը զոյա-  
ցընել որպէսզի Ամերիկայի մէջ Հոգեւորականաց պատրաստութեան եւ կրթութեան  
Համար ձեռնարկ կատարուի եւ յառկապէս Հոգեւոր ձեմարանի մը Հիմը գրուի:

Առաջնորդարանը արդէն կազմած է Յարիլիմական Կեդր. Յանձնաժողով մը,  
որ գործի ձեռնարկան է եւ կը կատարէ տօնակատարութիւնը կազմակերպելու  
աշխատանքները: Յիշեալ Յանձնաժողովի կազմը Հետեւեալն է:-

- Գր. Նշան Մահիւնեան - Առնեպետ
- Տիկ. Աստիւն Նիկոլեան - Փոխ Առնեպետ
- Գր. Նշան Աւագեան - Առնեպետ
- Գր. Հայկ Ամսարեան - Գանձապահ
- Անդամներ՝
- Տիկ. Ազնիւ Աւագեան
- Գր. Յովհաննէս Գալակեան
- Գր. Գրիգոր Զազմարեան
- Տիկ. Լեզիկեան Դաւիթեան
- Գր. Գրիգոր Յարութիւնեան
- Գր. Հան Գույումճեան
- Գր. Միհրան Նազարեան
- Գր. Սամուէլ Արուտեան
- Տիկ. Արաքսի Միլանեան
- Գր. Յարութիւն Թաթոսեան

Կեդրոնական զօրծան այս Յանձնաժողովը պիտի ունենայ նաեւ պատուակալ  
անդամներ:

Առաջնորդարանը Հրահանգ տուած է որպէսզի մեր բոլոր Համայնքներուն  
մէջ կազմուին Յարիլիմական Յանձնախումբեր, որոնց Կեդրոնական Յանձնաժողովը  
պիտի զրկէ տօնակատարութեան ընդհանուր ծրագիրն ու անհրաժեշտ ցուցմունք-  
ները: Հետզհետեւ աւելի մանրամասնութիւններ կը տրուին այս Յիսուսեայ  
Յարիլեանի մասին:

Գիւան Առաջնորդարանի

Մայիս 23, 1949  
Նիւ Եորք

Տ. Կրթանէս Ա. ԲՆԵՅ. Փափազեան  
Տ. Խոսրէն ԲՆԵՅ. Մամիկոնեան  
Մ. Աստիւն ԲՆԵՅ. Աշնեան